

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ


ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՆՓԻՍՐ

Նամակ կամ որ եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պապար Մուրուր, ԳԱՅԻՐԷ

Direction du journal PAROS

Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵԲՇԱՔԻԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եգիպտոսի համար տեղի. ողջ դ. 80
վեցամսեայ 50
Օսար երկիրներ տարեկան ծրամ 25
վեցամսեայ 14
Թղթասարի ծախքը խմբագրու-
թեան վրայ է :

Խմբագրութեան ուղղութեամբ նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուի :

ԴՐԱՍ ԵՒ ԳՐԻԶ

Մարդ մը որ իր դրամին փոքր մէկ մա-
սը, մէկ մասնիկը, ազգին կը նուիրէ փա-
ռաւորութեան կամ երկրորդին թէ բարեգոր-
ծութեան համար, աւելի ծառայութիւն մա-
տուցած կըլլայ քան ուրիշ մը որ իր մտաւո-
րական աշխատութիւնով, իր գրչով կուզէ օգ-
տակար դառնալ հանրութեան :

Քաղաքակիրթ միջավայրերէն սկսելով՝
խաւարեալ կամ նախապաշարեալ ժողովուրդ-
ներու մէջ անգամ ինքզնիք առարկայ եղած
ու մինչեւ մէկ աստիճան իր լուծումը գտած
այս հարցը կուգայ կը կանգնի մեր առջեւ այն
պահուն ուր ծիծաղելի արձագանքներ կը հաս-
նին ականջնոս, թէ հարուստին մէկը որ այս
միջոցին «գլխով ոտքով մէջ ինկել է» տեղա-
կան ազգային գործերուն, Առաջնորդարանին
մուտքը այս կամ այն խմբագրին արդիւնեւ
յաւակնութիւններ կունենայ, որովհետեւ իր
արտաւայելի ու հակաքրիստոնէական ծրագիր-
ներուն պաշտպանութիւնը չի գտներ Փարոսին
մէջ : Ծերունակարդ ու բարեպաշտ քահանայ
մը փախցուց արդէն այդ միեւնոյն անձը և
չի պիտի զարմանանք եթէ օրին մէկը նոյն
հարկին մէջ դնէ անոր արժանայարգ յաջորդն
ալ միեւնոյն պատճառներով : Բայց լրագրողը
գիւրաւ խոյս չի տար, որովհետեւ ամբողջ ժո-
ղովուրդին հետ է իր գործը և ո՛չ թէ ան-
հատի ու հարուստի հետ : Որքան որ զօրէ իր
ձայնը՝ դէմ պիտի կանգնի տաճարին մէջ վճար-
ուած թիկնաթու դրուելու գաղափարին, պի-
տի նշաւակէ այն պատուակալ վերակացուն
որ աղքատ հայ երիտասարդը կը հարկադրէ
խպտի կամ յոյն քահանային պատուի՝ մեր
եկեղեցիին մէջ անոր կարողութենէն վեր սա-
կազին մը պահանջուելուն համար : պիտի քնն-
նադատէ՝ գերեզմանատան ափ մը հողը ազ-
գային աշխատաւորներուն դրամով ծախելու
արժաթախուրութեանը դէմ : Օրինակներ կու-
ղէք. ամենէն թարմը ու տխրագոյնիկը յի-
շուլ համար միայն, «Պատուելի» թաղումը
իր կեանքը, ինչքը, երիտասարդութիւնը ազ-
գին սիրուն զոհած այդ ազնիւ հայը թշուա-
ռութեան մէջ ու պանդուխտ մեռաւ հոս :
և սակայն Մարմինայի «վերի» թաղին մէջ
անոր ակիւն մը «շնորհուելու» համար երեւո-
ւի պահանջուեցաւ, ինչ որ ստիպուեցան ի-
րենց համեստ քսակէն հանգանակել ու տալ

իր ընկերները, թէեւ խեղճին այրին ու որը
զաւակը անօթի են անդին, իրենց գիւղին՝
Արմուանի մէջ : Դեռ տարի մը չընել, եկեղեց-
ւոյ դպրասպետին պղտիկ զաւակը մեռաւ : մէկ
ու կէս ոսկի մըն ալ անկէց առին, կարծենք,
ամսականէն վար դնելով :

Ասոր վերջը...

Բայց նպատակնիս՝ այս անիրաւութիւն-
ներով զբաղել չէ, զորս հանրային կարծիքը
զայտուի : Եւ արդէն. ուշ կամ կանուխ
աստիճանով պիտի բարեկարգուին : Զգա-
ցունելով իր կեանքը միայն, պարկեշտ և ուղ-
ղամիտ հրապարակագրութեան դէմ անար-
գանք ու հայհոյութիւն թափողին՝ թէ ինք իր
ըմբռնած եղանակով կրնայ իշխել իր դեղեակին
մէջ միայն ինչպէս մենք տէրն ենք մեր տանը
կամ խուցին : Բայց Առաջնորդարանին մէջ,
ժողովուրդու սուշեւ, հանրային խնդիրներու
մասին, իր հոգաբարձուի հանգամանքէն վեր
գերիշխանութիւն մը չի կրնար ստեղծել : այդ
եւնիթէրիական վարմունքներուն դարը անցած
է : Ինքը ազատ է իր դրամի զօրութենէն ու իր
հարուստի գիրքէն դուրս ուրիշ բան չի ճանչ-
նալ, քննողներ միայն պահել շուրջը, չի հան-
գուրծել որ մէկը գիտողութիւն ուղղէ իրեն :
այս բոլորը անհատական կեանքի մէջ : Իսկ
երբ հանրային կեանքի մէջ կը մտնէ, խմբա-
գիրն ալ, ուսուցիչն ալ, քահանան ալ, միւս
ժողովականներն ալ իրենց ձայնը ու արժա-
նապատւութիւնն ունին : Մարդ մը Զուլու-
ներու կամ Հոթենթութներու աշխարհէն գա-
լու է, ի դարու սեմին վրայ քաղաքակիրթ ու
ազատ երկրի մը մէջ կարենալ պոռալու հա-
մար «էֆենտիմ», խաղէթա ի՞նչ ըսել է, խա-
ղէթաճի՞ն փով կըլլայ կոր : կը վայլէ՞ք խա-
ղէթա կարգաք ու խաղէթաճիներու հետ
տեսնուիք : Սաանկ պուշտուք մը՝ բարկու-
թիւննիս չի շարժել, այլ արհամարանք ու ծի-
ծաղ միայն : բարեխախտաբար զայն արձակողը
մէկ հոգի է միայն, տեսակին մէջն ալ մէկ
հատիկ :

ՆԱՄԱԿ ՍՈՒՏԱՆԷՆ

ՀՐԱԻԷՐ ՄԸ

Ա.

Ա.ՊՈՒ-ՀԱՄԵՏ, 22 դեկտեմբեր

Մեր ազգայիններէն անոնք որ գէթ մի բաւոր
գարէ ի վեր նեղոսի տիպայ վրայ հաստատուած են
ու ձօնէն քաջահուտ եղած Եգիպտոսի անցեալին,

տխրութեամբ անշուշտ պիտի յիշեն զայն՝ եթէ յե-
տաւայեաց ակնարկ մը ձգել ուզեն : Շահադարձու-
թեան՝ երջանկութեան ճշմարիտ ոսկեգար մ'էր, որ
աւա՞ղ, անցաւ ա՛լ չվերադառնալու : Մեզի ի՞նչ
փոյթ գիտնալ թէ ինչ դրութեան մէջ էր այն ատեն
կառավարութեան գանձը երկուսկան տեսակէտով :

Բայց դուք ո՞ւր էիք խեղճ հայ դաղթականներ,
այն ատեն՝ երբ, հոլաթեւ բամբուկներու մեղրանոյշ
լեզուն գործածելու համար, «ոսկի առատ պաղպա-
ջուն տեղայր» ամէն դի փարաւոններու աշխարհը :
Սայիտ փաշան կենդանի էր իր յիշատակու, իսկայիւ
փաշայի փառաց ոսկեպիւտ հետքերը լիարուստ կը
գնահատուէին հրապարակին վրայ : Յէլլահը, այն
ատեն, կէս կոյր էր, ոչ խորամանկութիւն ունէր
այսօրուան պէս, և ոչ ալ չարածի՛ ֆրանկներուն
հարազատութիւնը : Կողերը, համբերն ու ծոյլ. . . երբ
անգամ, ո՛վ օրհնեալ դար, կուշտ փոր էին : Վա-
ճառականութիւնը, շահաւէտ ամեն պարագայի մէջ,
որ քան զօր ծաղիկելու վրայ էր, և որ աւելին, կա-
րաւաններ՝ խուռներամ՝ շարունակ վաճառք կը տա-
նէին Սուտան՝ անկիւն ի փոխարէն տեղւոյն թան-
կազին բերքերը փոխադրելով յ'Եգիպտոս : փողակը,
չայլածի ինտուր, խէժ (gomme), արծաւ երկ :

Ա՛խ, հին բարի ժամանակները : Ի՞նչ կըլլար ե-
թէ այնպէս մնացած ըլլային՝ փարաւոնական պարզ-
մտութեան և արքայական փառասիրութեան հետ,
սակայն, այսօրուան քաղաքակիրթ աշխարհի բարե-
մասնութիւնները պահելով հանդերձ : Բայց չէ՞, այդ
սպիտակաթի ոսկեպեղիկ գարը, à la vieille turque
եթէ կարելի է այսպէս ըսել, աւա՞ղ թաղականաց
ըլլալու սահմանուած չէր, զի ոյն՝ ներկայ շահա-
խնդիր դարավերջին հակապատկերն էր : Եւ, իբր
սպառազ աղէտներու բոթաւէտ նախաբայլ, յանկարծ
պայթեցաւ տիտահոջակ Արապի փաշայի ապստամ-
բութիւնը 1882ին ուրիշ տեղի ունեցաւ Աղեքսան-
դրոյ ուրակոծութիւնն ու rks նախկիններու ներկա-
յութիւնը բուրքերու շուրջն, de bon ou de mau-
vais augure, Աստուած գիտէ, դանց կընեմ տառ
ժանտախտը, դժոխաց պատիժը :

Սուտան ինք իսկ մեծ Մուհամմէտ Ալիի ոսկի ե-
րազներու լայնածաւալ այդ աշխարհը, որ տարիներէ
ի վեր լռիկ մեջիկ խաղաղ մնացած էր իբր vassal
Եգիպտոսին, նա ալ մէկէն գլուխ վերուց, գոռաց
մոնջեց փարազագոյ աղեպայ նման՝ ինքնագոյ Մահմուդ
մը սաղաթէական առաքելութեան ներքեւ, որը չը
գիտեմ երկիրքէն թէ խաւարէն ներշնչեալ՝ ոգի ա-
ռաւ և հրաւեր կարդաց հաւատաւորներու ձեռնա-
տի : դրօշին ներքեւ համախմբուելու, անիծեալ
թուրքերը (օտաւայի) դուրս վանելով սրբապաշտ
կրօնը վերականգնելու համար : Պատրուակ մը որով
փառաւորուիլ ուզեց հոգեով թէ մարմնով, այն էր
աշխարհակալել և միանգամայն Մարգարէին փո-
խանորդ կոչուիլ : Ի՞նչ կարող չէ ընել ազա՞ մը,
սանդարամէտական մը՝ մոռախապատ վայրի երկրի
մը մէջ, երբ կոյր մոլեռանդութիւնը հեւ ի հեւ կը
մղէ այնպիսին : Զը վարանեցաւ ուրեմն ճակատ առ
ճակատ պատերազմելու խտիվական կառավարու-
թեան դէմ, և ասպարէզը բաց գտնելով ինչ ինչ
խոչնդոտներու բերմամբ, զորս համառօտակի պիտի
ծանօթացնեմ՝ ուրիշ առթիւ, յառաջացաւ՝ անդէն
և անսուղ հրոսակներով, աւերեց, աւարեց և մէկ
խօսքով սրոյ ճարակ ըրաւ ինչ որ ձեռքն ինկաւ՝
սպարապետ Կորտոն փաշա ինքն ալ, նա որ այնքան

սիրուած էր սուտանայիններէն իր հանրաժանութ ար-
դարադատութեամբն ու առատաձեռնութեամբը :

Մասամբ մը բաղդաւոր եղան Սլաթին փաշա և
այն վատաբաստիկ արարածները, որոնք, բաղդ թէ
հրաձիգ, վայրի դազաններու արիւնարբու ժանիքնե-
րէն խնայուած կաշկանդուած կը մնան Օմուրումն,
որ մը ո՛ր դիտէ ազատութեան լուսաճաճանչ կենսա-
տու արեւը տեսնելու ազոտ յոյսով . անոնց աղիւ-
ցորմ՝ շարքին մէջ կը գտնուի նաեւ , ըստ Սլաթին
փաշայի, հայ մ'այ՛ Ժամագործ Արթին անուամբ .
մականաւոր անձանքով , Հաւանական է սակայն որ
դեռ ուրիշ հայեր ալ կան հոն . զի շատոնց ի վեր ,
Սուտան արդէն իսկ ծանօթ էր մեր ազգայնոց, և
չառերն ալ հարուստ վերադարձած են, ինչպէս ե-
ղած են յօլուածագրոյս հօրեղորորդիները : Կա՞յ
հայ մ'այսօր, որուն թախծալից սրտին մէջ սեւ տա-
ներով գրուած չըլլայ, թէ ո՞ւմ որովայնի կուէլ դը-
նայ հիմա անոնց հարատւութիւնը : Վայրկեանէ շա-
հի՛լ՝ վայրենիներ յաղեցնելու համար . եղո՞ւկ բա-
ղում՝ քրտանցս . . .

Մէկ օրուան մէջ հիմնայաւորակ քայքայուեցաւ
մեծափարթեամբ և բաղձամարդ խորթուսը . օտա-
ւազգի բնակիչներ՝ այր, կին թէ մանուկ, սակաւիկ
բացատութեամբ անխնայ ջարդուեցան : Մեծ եղաւ
այդ օր զոհերու թիւը , զոր եթէ թուել ուզեմ՝ մի
գուցէ Հայաստանի կոտորածները յիշելու ակաւոյ
սարսուռն ունենաս, ո՛վ աղնիւ ընթերցող : Այսպէս
վաճառականներ կորանցուցին թէ կեանքերնին և
թէ դիզած դանձերնին , որոց փոխարէն կառավա-
րութիւնը՝ վերջէն, եթէ չեմ սխալիր, մէկ միլիոն
ոսկի տուգանք վճարեց անոնց մերձակայից . անը-
չան փոխարինում մը , բաժակ մը պաղ ջուր՝ այն-
բան ահաւելի կորստեան :

Այս ալեւտարի դէպքերու արդիւնքն այն էր ,
որ Սուտան բողբոջին ձեռքէ ելաւ, ամբողջ 15 տարի
խաւարի մէջ մռայլասող թաղուած մնալու համար :
Աւելորդ է ըսել թէ՛ Սուտան հարստութեան ան-
բաղդատելի աղբիւր մ'եղած է միշտ Եգիպտոսին :
Վաճառականութիւնը մեծ հարուած կրեց ասով ,
գործառնութիւնը տակաւ նուաղեցան Գահրիէի մէջ ,
և բնակչաց բաղձամարդանալուն հետ՝ նորեկները՝
ինչպէս կը տեսնուի , գրամ շահելու գիւրութիւն-
ներէն զրկուեցան : Մեծ դժբաղդութիւն մը անտա-
րակցա , որոյ դառնութիւնը խիստալս տեսան հայ
գաղթականները :

Երբ սակայն Սուտանի վերադարձումն ըսւրը ի-
րականացաւ , ամառնիկով մ'էր որ խնդութեամբ լե-
ցայ Խան-Խալիլի պարտհաւանները՝ կարծելով որ
այնպէս պիտի գտնէին Սուտանը ինչպէս որ տե-
սած էին : Սկզբովիկ մ'ըլլաւ չեմ սիրեր, բայց չէք
ալ սիրեր կարծեմ , որ շողովիչ ենթադրութեամբ
ձգնարտութիւնը քօլարիկելուցեմ , յուստարտութիւն-
ներ միայն վերապահելով անոնց որ դեռ ոսկոյ
Քյոնսույք մը կը կարծեն այդ ընդարձակոտարը
երկիրը : Պատճառն այն է որ, Սուտանի ժո-
ղովուրդը, հիւնա, յեաին աստիճան աղքատութեան
մէջ է : Ռաիկներու ըսածին նայելով, տեղւոյն բըռ-
նակալը, Խալիլիան, 60 միլիոն ոսկոյ գանձ մը թա-
ղած կը պահէ հեռաւոր անմատչելի լեռան մը վրայ :
Մի կարծիք ալ որ, կառավարութիւնը այս ահագին
ծախսերը ընելով՝ երկաթուղւոյ շինութեան համար
կին . կին . —բայց ոչ ահագին՝ բաղդատումը կորսո-
նի, Հիբսի և Վօլքէյի արշաւաններուն — մի կար-
ծէք որ այդ ծախսերը օր մը հանրութեան օգուտ-
ներէն չպիտի դեղչուին ինչ ինչ խտտապա՛անջ օ-
րէնքներու գործադրամբ , մանաւանդ որ , վերը
յիշուած առաջին երեք գլխաւոր բերքերու առանձ-
նաշնորհումը շատ հուսնօրէն անգլիական ընկե-
րութեան մը տրուի , եթէ երբէք խոջնդոտներու
բախելու հոն բաժանքը չունենայ այդպիսի չարագուշ
նպատակ մը . իրականանար այն , ալ ի՞նչ կը մնայ
անդին :

Մի զոգաք տակայն , շահաւէրներ , ինչքան ալ
անհաճոյ ըլլա՛յ այս կարծիքը՝ և յոռի՛ արդիւնքը ,
դեռ նորէն Սուտանը Սուտան է : Մրցում մ'է միայն,
որ տեղի պիտի ունենայ Խորթ ուս առնուելէ վերջ , այս
անգամ՝ à l'europeenne . ով որ յանդուգն ըլլայ ու
առաջ նետուի՛ նա պիտի վայելէ շահու լի ու լի երե-
խայրքը , ինչպէս մինչ այժմ՝ ըրին Յոյները, որոնք
տարիներէ ի վեր հաստատուած՝ ստիճաններու կապա-
սէին Սուտան և Վատի Հայթի , բոնակի հետ դաշնա-
դրած մենավաճառութիւններէն ի բաց՝ ի ձեռին բըռ-
նած ըլլալով առեւտուրի բոլոր գործերը . սրճարաններ ,
ըլիպներ , ճաշարաններ բացած են հոն՝ վայելչու-

թեամբ ու ճոխութեամբ ոչ սակաւ . համանման կեդ-
րոններու շիք հաստատութիւններուն Ո՛վ թուունքդ
Հերակլեայ, գտնուեցան անոնց մէջ այնպիսիներ , քաջ
և անձնապատան, որոնք դէնք մը վիզերնին, ատըր-
ճանակ մը մէջքերնին , չվախան մինչ իսկ յառա-
ջախաղաց դնողին հետ ընթանալու , մի հարցնէք
թէ՛ այն պահուն բանիկ՝ վաճառեցին յիսուն տրաւ
ծուխը և կամ չիշ մը ընկելին : Արծաթաթրութիւնը
ո՞ր ատեն մոլորութիւն մը եղած չէ ազա՛հ մահկանա-
յուններու համար . և երբ անվեհէր քաջասրտու-
թեան աւելցնէք հիւնալի համբերատարութիւն և
անվհատ տոկոնութիւն , եզրակացնէք թէ՛ այս նա-
խանձելի յատկութիւններուն կը պարտի այսօր Յոյնը
իր վաճառականութեան ծաւալումը : Ա՛հ , խեղճ
Ելլաղան . այն աշխարհաւոր հալահարուածներէն
վերջ՝ թերեւս գոյութիւն ունենալէ դադրէր , եթէ
չունենար հարուստ գաղթականութիւններ որոնք
հաւատալէք , կարող են վերականգնել զինք : Ապրին
թո՛ղ հայրենասէր Ավերօֆները :

ՍՈՒՏԱՆՅԻՆ

ՊՈՒՍԱԿԱՆ ՏԻՊԱՐՆԵՐ

ժԱ.

ԿԵՆՑԱՂԱՍԵՐԸ

Կենցաղատէրը Բերայի դասակ է ինչպէս տիրա-
ցուն Նաուը-Գարուի :

Գիշերը կապրի և յերեկը կը բնանայ .

Հարուստի տղայ , բնականաբար , որ քառա-
սըմբակ կը վատնէ պապային փարաները :

Աղէկ կուտէ և աղէկ կը հագուի, բայց գէշ կը
վարուի . . . պարտապահանջներուն հետ :

Իր օրը չորս մասի բաժնուած է : Առաւել Ղա-
լաթիս , կէս օրին Ֆիլիփին ճաշարանը , իրիկուան
դէմ՝ Լիբսէմպուր և գիշերը՝ Արտէմիսիոյն Սան-
թրալ՝ Սթանտիտէն՝ chez la mère Félix . Գաւիցն
Քրիսթալ , Գրիսթալէն Քոնքորտիս , Շիլլիւն նորէն
Սթանտիտ և անկէց . . . ալ մի հայրենք :

Շատ լաւ Ֆրանսերէն կը խօսի բայց գէշ կը
գրէ , օրով հետեւ . Ֆէլիքս Ֆուր Լիլուս բօքօթներէն
ստրկած է :

Կամօրջէն Պոլսոյ կողմը միայն այն ատեն կաց-
նի երբ Չալչըլին մէջի խանութը ծախելու վրայ է :
Ուրիշ ատեններ ասով պիտի համարէր Պաճէ-Գա-
րուէն անցնիլ :

Իր ընտանիքի ամեն անդամներուն հետ սրբո-
ղած է . Tas de bourgeois են անոնք :

Մեծ բարեկամներն են Պօթէր , Թօքաթլեան ,
Եանին , Ռուէթի croupierները , Բերայի բոլոր կիս-
աշխարհը , Սանդրայի կառնօնները և իրեն պէս քանի
մը հատ noceurներ :

Վերջին ծայր լաւ արդուկուած չապիկ կը հագ-
նի , միշտ կը հագայ , ուռեցած աչքեր ունի և բա-
րոյտկան մը . . . je ne vous dis que ça .

Կը լսէ Պէնէտիթին , քօք-թէյլ , սիթրօնաւ
(լիսօնաւ չըսեր , սովորական մահկանացուի չի նու-
նելու համար) une verte , (որ մեր գիտցած ապ-
սեքն է) , և շանրանքը Ֆրարքէ , երբ չընտղեցաւ .
ւորի մը հետ կը գտնուի :

Աչքին կողք կերակին սավորական խաւեքը և
բուլում բեցիթին որոնցով սակայն մեծցած է , և կը
վնտնէ (միշտ բարձր ձայնով) պոի , բամամպէր ,
մօն-տօր , բոտ տը սալիւ և ուրիշ այն ամեն պանի-
ները որոնք Եւրոպայէն եկած ըլլալուն համար՝
կաթէ կտրուած են շատոնց :

Ձի կրնար սիրել, blaséի հովեր կառնէ , բօքէր
կը խաղայ , բօլիսին հետ կուրներ կուռնայ , պարտք
վճարելէ կամաց կամաց կը հրաժարի , ոչ ծնունդ
ունի ոչ Ջասիկի սիրտը գուլթէ զուրկ է և զուրկ՝
խելքէ :

Կապրի , կը վայելէ , կը հագուի , իր վրայ խօսե-
ցնել կուտայ , և իր époqueը ընելէ ետքը օր մը
կ'անհետանայ հրապարակին և տունը կը քաջաւոր
կարդալով ժամանակ կանցնէ հաճոյքի այդ invalider
նկարագիրը սա չորս տողին մէջն է .

Կենցաղաւոր երեսասարգ երբ արքուն կը կենան,
Ձեղձումներով կը բայկայեն իրենց կեանքի մեքենան.
Միշտ ունենալ անոնք կուգեն , խաղ ու գինի , երգ,
պար , կին,
Բայց այս վերջնով կը գոհանան երբ որ կերթան կը
պառ . . . :

ՌԱՏԱՄԷՍ

ՓՈԲՐԻԿ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԾՆՈՒՆԴԸ

Դ. Յուցակ Նուիրատուաց

Գումար Գ. ցուցակի զըշ. ուղ 1656	
Տիկին Մարգարիտ Պէրպէրեան (Զա- կաղիկ)	97 50
Տիար Աւարէլ Փափաղեան	10
» Արմենակ Փափաղեան	20
Երկու բարեկամներ	40
Յ. Ա.	20
Մառի և Զապէլ	20
Այրի Տիկին Շ. Ալիփար	20
Մարքուհի և Մովսիս Ալիփար	20

Գումար զըշ. ուղ 1904 00

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Ռուս կառավարութիւնը դեկտ. 29ին
նոր և ստիպողական ծանուցագիր մը ուղղեր
է Դրան ի մասին ուսակթուրք պատերազմի
տուգանքէն իր ունեցած պահանջքին որ է
500,000 ոսկի : Դուռը կը պատրաստուի եղեր
250,000 ոսկիի թերհաշիւ մը վճարել :

—Թեսալիոյ մէջ տիրող սաստիկ ձմրան
պատճառաւ , օսմ. բանակը Ֆարսալա քաղա-
քին մէջ պիտի համախմբուի : Զօրաց պէտ-
քերը կարենալ հայթայթելու համար՝ տեղւոյն
հրամանատարը արդիւնք է որ գիւղացիներուն
ալիւր չի ծախուի :

Հելլէն կառավարութիւնը բողոքած էր
Դրան , Թեսալիոյ մէջ գտնուած հնագիտա-
կան առարկաներուն Կ. Պոլսի փոխադրուելուն
գէմ : Այս առթիւ Աթէնքի թերթերը կը գո-
վեն Վօլօի Ֆրանսական հիւպատոս Ռուփու
կոմսը որ միջամտելով թող չէր տուած որ ա-
նոնց մնացեալ մասը տեղերնուն հանուին . իսկ
անոնց զորս կարելի չէր եղած ազատել թուր-
քերուն ձեռքէն , լուսանկարն հանել տուած է
Վօլօի մէջ , նաւ դրուելէ առաջ :

—Պէրութի պատժական ատեններ 6 և
3ական ամսուան բանտարկութեան դատա-
պարտել է այն երկու չարագործները որոնք
քանի մը ամիս առաջ փողոցին մէջ գաշոյնով
վիրաւորած էին Պանը Օթօմանի մանածիւ-
ղին գեր-անօրէնը ու քննիչներէն մէկը : Իսկ
երրորդ ձեռքակալեալը արձակուել է : Այս
ամենաթեթեւ պատժին վճիռը մեծ յուզում
առաջ բերել է քաղաքին եւրոպական շրջա-
նակներուն մէջ , մանաւանդ անոր համար որ
գիտէին թէ Պանդային Կ. Պոլսոյ տնօրէնու-
թիւնը խոստում տուած էր կառավարութե-
նէն հրահանգ խրկելու որ դատը արգարու-
թեամբ տեսնուի :

—Սելանիկ Կ. Պոլսոյ , Անատոլի և
Սելանիկ Մանասթըրի երկաթուղեաց ըն-
կերութիւնները ստիպողական ձեռնարկներ
կընէին Դրան մօտ , որպէսզի պատերազմա-
կան փոխադրութիւններու հաշուէն իրենց ու-
նեցած առնելիքները վճարուին տարեգլխէն
առաջ : Ատոնց դումարը կը հասնի 285,000
ոսկիի : Պանը Օթօմանը յանձն առել է այդ
վճարումներն ի հաշիւ կառավարութեան , բայց
քանի մը ձեւակերպութիւններու կատարման
կը սպասէ 600,000 ոսկիի կանխավճար մը ը-
նելու համար պատերազմական տուգանքին
երաշխաւորութեամբ :

—Բեդրասպուրի մէջ կարգ մը քաղաքա-

կան ձերբակալութիւններ կատարուեր են այս օրերս: Ձերբակալութեան մէկ մասը ուսական հոգէն դուրս հանուեր է, իսկ մնացեալները պիտի դատուին:

—Յունաստանի խորհրդարանը այսօրուան համար ի նիստ հրաւիրուած է, նկատողութեան առնելու համար երմտական քոնգրուի ծրագիրը ու տէրութեան պիւտճէն:

—Երէկ և առջի օրը հասած հեռագիրները մեծ մասով կը վերաբերին ծայրագոյն արեւելքի գործերուն: Պէրլինէ կը ծանուցուի պաշտօնապէս թէ չինական կառավարութիւնը 50 տարուան համար Գերմանիոյ թողուցեր է Գիաու-Չէու նաւահանգիստը, քանի մը հազար քառակուսի մէդր գետինով մէկտեղ ուրոնց վրայ Գերմանիա ազատ պիտի ըլլայ չէնքեր ու ամրոցներ կառուցանել: Իսկ եթէ այդ տեղը իրեն յարմար չի գտնէ, իրաւունք պիտի ունենայ ուրիշ նաւահանգիստ մը պահանջել անոր տեղ: Թայմը իր վերջին խմբագրականին մէջ կըսէ թէ Անգլիա համամիտ չէ Չինաստանի բաժանման. ընդհակառակն, «երկնային կայսրութեան» անվթար պահպանման կը փափագի, իբրեւ ընդարձակ կեդրոն մը առեւտրական մեծամեծ գործառնութեանց: Եթե ուսածը սա գաղափարին կը յարի թէ Անգլիա դրամական աջակցութիւն ընելու է Չինաստանի, անոր վաճառականութենէն օգտուելու համար: Թայմը իբրեւ օրինակ առաջ կը բերէ Սիւէզի ջրանցքը: Իսկ Ֆրանսական մամուլը այսքան կարծիք մը յայտնելու ձեռնհասութիւնն ալ չունի, և պարզապէս համամիտ կը գտնուի Գիաու-Չէուն Գերմանիոյ թողուելուն, ինքզինքը սապէս միտնաբերելով թէ այս կարգադրութեամբ՝ չինական կայսրութեան բաժանման խորհուրդը մէկ կողմ կը թողուի: Գերմանիոյ զօրութեան առջեւ համակերպելու համար՝ լաւագոյն փաստ մը չէին կրնար գտնել Ֆրանսացիները:

ԱՅԺՄԷՈՒԹԻՒՆ

ՁԻԱՐՇԱԻ

Եւրոպացիներուն էն սիրական մէկ օրն է այսօր: Կեդիւրէի մէջ ձիարշաւ կայ:

Sportի այս ձիորդ — անոր միւս ձիորդներուն պէս — այնքան հրապոյր չունի մեզի համար, որ նորութիւն մը ներմուծած շրջաշաղկապները կը նուազանան: Երբ մեր Այժմեանքիւնը կը նուազանանք եզրապահական այս մանրանկար Derby day ին:

Ձիարշաւ կայ եղեր, որի՞ն հոգ:

—Ինչո՞ւ ինչիկիւնքը ծիւղով ետքը պիտի ընեն, առ ալ պա՛ն մը ըլլար:

Եւ սակայն ձիարշաւը ասոր համար չի դարձիր Եւրոպայի ամենեւնի նուիրագործեալ մէկ սովորութիւնը ըլլալէ:

Ի՛նչ հրապոյրիչ հաւաքում մըն է այն ուր, քաց օրին, արեւին կենսաստ ճառագայթներուն տակ, գուարք եւ ոգեւորեալ քաղնութիւն մը կը շարժի, կը խօսի, կը դրօշմու, եւ տուն կը վերադառնայ գեղեցիկ օր մը անցուցած ըլլալու հաճոյքով:

Մերիկները, ընդհակառակը, հարուստները կակնարկենք քնականաբար, ոչ ձիարշաւ վրայ գաղափար ունին եւ ոչ ձիարշաւի:

Կա՛մ խաղիկն կերքան եւ կա՛մ տունը առնալ կը քաւքաւեն, երբ անդին արեւի կաղաւթի, արեւի օգտակար գրօտակ մը կայ որուն համար ոչ ժամանակ եւ ոչ դրամ կը խնայէ եւրոպացիներուն սակայն ամեն ջրածին վրայ կը հիսնանք հեռուէն:

Ձիարշաւներուն, եթէ ոչ անոնց մասնակցիչը, քայց գոնէ անոնց ներկայ գրծնուիլը մեզեւն էր մեր բարեկրուն մէջ. անոր օգուտը մէկէ արեւի է:

Պայքարի, մրցումի պիտի մեր անձին վրայ չենք գգար, ո՛ր մնաց ձիերէն ապաւնել այդ առաքինութիւնը:

Մեր մէջ միակ մրցում մը, միակ պայքար մը կայ. ով որ շատ կը պոռայ եւ շատ չալմ կընէ Առաջնորդարաններուն եւ կա՛մ ժողովներուն մէջ, ամենեւնի շատ ան կը վաւերի:

Մեր hippodromeը ազգային գործերն են եւ մրցողները... քաղաքին մենծ աղաները:

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՓՈԽ-ՀԻՊՈԴՐՈՄԱՆ ԲՈՒՄԻՈՑ Ի ԳԱՀԻՐԷ

Ա. Զ. Դ.

Քաղաքային Օրինաց Կանոնագրին Փ. հասոյի Ա. մասին 1239րդ յօդուածին համեմատ, ստորագրեալը կը հրաւիրէ Գահիրէի մէջ 1897 թիւ 11/23ին վախճանեալ, ուսական հասակի Պօղոս Կարապետ, եւնի ժողովները եւ պահանջատէրեր ներկայացնել իրենց վաւերագրերը բուական միջեւ վեց ամիս: Այս պայմանաւոր լրանալուն, որեւէ պահանջում չպիտի ընդունուի:

Ռուսական Փոխ-Հրապարտ

Ա. Ի. Ա. Ն. Օ. Յ.

Գահիրէ 22 դեկտեմբեր 1897

3 յունվար 1898

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Առաջնորդական Տեղապահ Տ. Յակոբ Ծ. վարդապետ Այսօր՝ ընկերակցութեամբ Տ. Մամբրէ քահանային՝ այս առաւօտ Ապտինի պալատը գնաց ի շնորհաւորութիւն Բարձր. Խորհրդին գահակալութեան տարեդարձին:

Եւսոյ, այցելութիւն տուաւ Ղապտինիւր Կաթողիկոսին որոնց Ծնունդ էր երէկ, և Պօղոս փաշա Նուպարի՝ իր անուան տօնախմբութեան առթիւ:

Եզրապահայ հայ գաղթականութեան մէջ վաղեմի սովորութիւն է որ Աղեքսանդրիոյ Ս. Պօղոս Պատրիարքին տօնախմբութեան օրը Առաջնորդը կամ Առաջնորդական Տեղապահը յատկապէս հոն հրաւիրուի պատարագելու: Այս տարի, Թաղական Խորհուրդը, չենք գիտեր ի՞նչ պատճառաւ, չեղեցաւ այս սովորութեան և աւանդական հրաւերը չուղղեց:

Չենք ուզեր հաւատալ որ իրաւ ըլլայ ոմանց այն կարծիքը թէ Աղեքսանդրիոյ Թաղական կը յաւակնի չի ճանչնալ Առաջն. Տեղապահին ու Գահիրէի ազգ. իշխանութեանց իրաւասութիւնն իր վրայ և ինքնագլուխ վարչութիւն մը կազմել փորձէ իր ջրլանակին մէջ:

Չեւքերնիս անցաւ Թիֆլիզի Հայոց Հրատարակչական ընկերութեան, որ 17 տարիէ

ի վեր հաստատուած է, հրատարակած պրզտիկ մէկ տետրակը որով գաղափար կուտայ իր գործառնութիւններուն վրայ: 1880էն մինչեւ 1897 յունվար 1՝ տպագրած է 117 գիրք: Իսկ վերջացող տարեդէ մէջ իր հրատարակած հաստիւններուն թիւը կը հասնի 23ի:

Այս օրինակելի ընկերութեան յառաջգիմութիւնը գոհունակութիւն կը պատճառէ ամեն ընթերցասէր հայու:

Նիւ Եօքըի Հայ Գահիրէի մէջ կը կարգանք թէ Ամերիկացոց Ազգային Հայախնամ Թանձնախումբն անցեալ տարեդէ մէջ 35,500 տողար յղած է ի Հայաստան որպանցներու համար, և 180,000 տողար ալ ընդհանուր և արհեստագործական օգնութեան համար:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒՄ

Վաղը գիշեր ժամը 9ին Ապու խալիլ թատրոնին մէջ արտադրող կարգի ներկայացում մը տեղի պիտի ունենայ հայ թատերական ընկերութեան կողմէ ի նպատակ խումբին յուշարար Պ. Գիւրգ Գաղաղեանի:

Տրուելիք խաղն է Կարմիր կամուրջի ոգիւր, բարոյակց և հետաքրքրական թատերգութիւն մը զոր կարծէ տեսնել:

Խիստ ծիծաղալար զաւեշտ մը պիտի վերջացնէ երեկոյթը:

Նպատակաւորեալը խումբին օգտակար և պարկեշտ մէկ անդամն է որուն երեկոյթին ներկայ դուտ, նուր կը յանձնարարենք բոլոր թատերասէր հասարակութեան:

ՏԵՂԱԿԱՆ

Այս առաւօտ, Բարձր. Խորհրդը Ապտինի պալատին մէջ հանդիսաւոր ընդունելութիւն կատարեց իր գահակալութեան վեցերորդ տարեդարձին առթիւ, զոր շնորհաւորելու գացին խորհրդական գերդաստանի անդամները, նախարարը, քաղաքային ու զինուորական բարձրաստիճան պաշտօնատարներ, օտար տէրութեանց դիւանագիտական գործակալատարներ և զանազան հասարակութեանց հոգեւորներ: Կայացուցիչները:

—Բրիտանական կառավարութիւնը Սուտանի եզրապահական ու անդիւրեակն բանակներուն սպարապետ անուաններ է Գիւնէր փաշան:

—Խորհրդական փաշայի թոռ և արդի Խորհրդի հորեղբորդի բաժնի Սայիտ Թօսուն չորեքշաբթի գիշեր մեռաւ: Շատ երիտասարդ էր տակաւին ու եւրոպական կրթութիւն մը առած: Սէն-Սիւրի զինուորական վարժարանին աշակերտած էր: Մարմինը Գահիրէէն Աղեքսանդրիա փոխադրուելով հինգշաբթի օրը, յուղարկուողութիւնը կատարուեցաւ հոն հանդիսաւոր կերպով:

—Անգլիական գրաւիչ բանակէն Լինքօլն շայր զօրագունդին Ա. բաժինը չորեքշաբթի իրիկուն Գահիրէէն մեկնեցաւ գէպի Վատի-Հայֆա:

Ուրիշ զօրագունդ մըն ալ երէկ իրիկուն ճամբայ ելաւ դէպի Պէրպէր:

—Բարձր. Խորհրդը ընտանեօք Մոնթաղահէն Գահիրէ վերադարձաւ չորեքշաբթի գիշեր:

—Գերմանական ընդհ. հրապարտ Պ. Միլլէր երէկ Բարձր. Խորհրդին ներկայացաւ իր յանձնարարագրերը յանձնելու համար:

—Թէեւ ըսուեցաւ թէ տեղական կառավարութիւնը դիտաւորութիւն ունէր Խորհրդական չորեքշաբթի ընկերութիւնը լուծել և չորեքշաբթի ծախել անուրդով, բայց ըստ վերջին տեղեկութեանց՝ առ այժմ՝ իսկ ձեռք ուսած է այդ ծրագրին գործադրութիւնը:

—Անցեալ երկուշաբթի օր վերջացող շաբթուան մէջ ժամատարի 320 դէպքեր պատահած են ի Պոմպէյ, որոնց 291ը մահացու:

—Գերմանական նաւախումբը, հրամանատարութեամբ Հայնրիխ իշխանին, հինգշաբթի օր Սիւէզի ջրանցքէն անցաւ չինական ջուրերը երթալու համար:

—Ստորին Եգիպտոսի մէջ Խտիվին պատականող բոլոր պալատները թէլէֆօնով իրարու միացնել ձեռնարկուած է երէկուէն սկսեալ:

—Հանրագումար չինութեանց նախարարութեան բարձրագոյն պաշտօնեաներէն Փրանսացի Օրիվիէ պէյ իր պաշտօնին մէջ զեղծումներ ըրած ըլլալուն համար մասնաւոր ատենի մը առջեւ պիտի դատուի:

—Առողջապահական ժողովը որոշած է այսուհետեւ իբրեւ վաւերական ճանչնալ այն բժշկական վկայագրերը որոնք Պէրուի շաւրիկեան բժշկական վարժարանէն կը տրուին շրջանաւարտ աշակերտներուն:

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԸ

Վերջին մարդահամարին առթիւ Պ. Ալպէս Պուանէ Պէյ տեղեկագիր մը պատրաստած է որուն մէջ խիստ հետաքրքրական կէտեր մեր աչքին զարկած ըլլալով անհրաժեշտ և օգտակար կը համարինք Փարոսի ընթերցողներուն հաղորդել զանոնք:

Գլխաւորապէս սա պէտք է գիտնալ թէ Եգիպտոսի ընդհանուր բնակչաց թիւն է 9,734,405 որոնք 1,422,302 բնակարաններու մէջ պատկարարուած են:

Այդ բնակիչներուն 4,947,850ը էրիկ մարդ են և 4,786,555ը կին:

Հազար ութ հարիւրին ամբողջ Եգիպտոսի մէջ 2,460,200 բնակիչ կար, հետեւաբար գրեթէ մէկ դարու ժամանակամիջոցի մէջ բնակիչներու թիւը քառապատկուած է:

Այժմեան բնակիչները սապէս կը բաժնուին: Ստորին Եգիպտոս 5,676,109 և Վերին Եգիպտոս 4,058,296:

Բնիկներու թիւն է 9,621,879 և օտարականներունը 112,526:

Բնիկները հետեւեալ կերպով կը բաժնուին. բուն տեղացիները 9,007,755, տաճկահայատակները 40,150, պէտէվիները 573,974:

Օտարագրիներն են՝ յոյն 38,175, իտալացի 24,467, անգլիացի 19,557, ֆրանսացի 14,155, աւստրիացի 7,117, ռուս 1,193, պարսիկ 1,301, գերմանացի 1,277, սպանիացի 765, զուիցէրացի 472, ամերիկացի 291, պէլճիգացի 265, հոլանտացի 247, բօրթուկացի 151, նորվեկիացի 107, տանիմարգացի 72 և զանազանք 923:

Գրօնական տեսակէտով ժողովուրդը սապէս կը բաժնուի:

Իսլամ	8,978,755
Քրիստոնեայ	730,162
Հրեայ	25,200
Չանազանք	268

9,734,405 բնակիչ վրայ միայն 467,886ը կարգաւ գրել գիտեն որոնց 435,993ը էրիկ մարդ և 31,893ը կին. ըսել է Եգիպտոսի մէջ 9,266,519 բնակիչ կայ (ամբողջին 95 0|0ը) որ բնաւ գրել կարգաւ չեն գիտեր:

Վարժապետներուն աչքը լոյս:

PASCHAL & C^{IE}

G. G. MEIMARACHIS & C^{IE}

SUCCESEURS

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՆՈՐԱԶԵԻՈՒԹԵԱՆՑ
ԵԳԻՊՏՈՍԻ ԱՄԵՆԷՆ ԸՆԴԱՐՁԱԿԸ

ԲԱՍՔԱԼ ԵՒ ԸՆԿ.

Գ. Ճ. ՄԵՅՄԱՐԱԲԻ ԵՒ ԸՆԿ., ՅԱԶՈՐԴԲ

ԳԱՀԻՐԷ ԷՕԶՊԵՔԻԷ ԳԱՀԻՐԷ

Չմեռնային նորաձեւութեան մետաքսեղէններու, բրդեղէններու և այլ այս կարգի ապրանց մեծ և բազմաստիակ վաճառում:

Բարիզեան վերջին ճաշակով պատրաստուած գլխարկներու յատուկ վաճառարան և մօտիսներու վերաբերեալ նիւթեր:

ՆՈՐԱԶԵԻՈՒՆ

Անգլիական և ֆրանսական ասուեղէններու ինչպէս գերձակներու վերաբերող ապրանքներ:

ՔՐԻՍՏՕՅԼԻ ԱՐԾԱԹԵՂԷՆՔ

Մեծ մթերանոց սեղանի սպասներու և խոհանոցի առարկաներու:

ԱՊՐԱՆՔՆԵՐԸ ՏՈՒՆԵՐԸ ԿԸ ՅԱՆՉՆՈՒՆ

Մեծաքանակ գնողներու մասնաւոր զեղչ
7—10

ԳԱՐԹԱԼԻ ԸՆՏԻՐ ԳԻՆԻ

Պոսէն յաւկապէս բերել տրուած այս սեղանի համար անառաք գինին կը ծախուի Նուանդ Պոլոս Եանի խանութը ի Պազար Մուրուր քիւ 42. Գանիքի ուր կը գտնուի նաեւ զուս եւ պատուական օղի:
16—16

ԼՈՒԱՅԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻԶ

Մ. ՏԵՐ ՍԱՀԱԿԵԱՆ

ԺԱՌՏԷՆ ՌՕՍԷՔԹԻ, ՇՐԱՆՏ ԱԶԱՏԵԱՆԻ ՆԱԽԿԻՆ ԽԱՆՈՒԹԸ

ԿԸ ԼՈՒԱՅ ամեն տեսակ ճերմակեղէններու հագուստներ. ԿԱՐԴԻԷ արանց և կանանց շապիկներ, շրջագրեւորներ, ևն. մաքրութիւն, ճշգրտահամութիւն, և խիստ չափաւոր գին:
11—24

ՏՊԱՐԱՆ

“ՓԱՐՈՍ, ԼՐԱԳՐԻ

ԿԸ ՏՊԱԳՐՈՒՄ

ԱՄԵՆ ԼԵԶՈՒԻ ՇՐԱՐԵՐԱԿԱՆ

ՄԱՀԱԶԻ, ՀՐԱԽԻՐԱԳԻՐ, ԱՅՅԱՔԱՐՏ

ՅԱՆԿԵՐ, ՏԵՂԵԿԱԳՐԵՐ

ՎԱՇՈՒՆՅՈՒՅԱԿ. ՆԱՄԱԿԱԳԼՈՒԿ

ՏՈՄՍԵՐ

Եգիպտոսի որ և է քաղաքէ կամ գիւղէ եկած յանձնարարութիւնները ամենայն խնամք և փութով կը կատարուին:

ՎԱՅՐԿԵԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Այցեխարտերու եւ տոմարերու

Տպարանը բաց է ամեն օր բացի կիրակի եւ օգոստոսի, առաւօտեան ժամ 7էն երեկոյեան ժամ 7:

PHARMACIE DE LA POSTE

ԴԵՂԱՐԱՆ Ե. ԱԻԱԳԵԱՆ

ԳԱՀԻՐԷ, ՓՕՍՏԱՅԻ ՇՐԱՊԱՐԱԿ. ՄԱՍՏԻՍԻ ԱՊԱՐԱՆՔԻՆ ՏԱԿ

Այս նորաձեւութեան զեղարանին մէջ յաճախողները պիտի գտնեն եւրոպական բազմազան գործարաններէն բերուած խալիքներ, չափաւոր գիներով: Դեղագիրները ամենայն խնամք և ուշադրութեամբ կը պատրաստուին:

Անգլիական և ֆրանսական սքեսիպիքներ: Թարմ հանգալից ջուրեր, անուշահոտութիւնք եւն. բնաշուծական և մանրագիտական քննութիւնք: Դեղարանս կը յաճախեն հայ և օտարագրի ծախօթ ըմբիւրներ:

Բժշկական ձրի խորհրդածութիւնք աղքատաց համար:
17—50

Ս. ԹԵԼԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ-ԴԵՐՁԱԿ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ, Յ ԹԵԼԻՖ փաշա փողոց

ՇԱՆՈՒՆ ՎԱՃԱՌԱՏԱՆ ԴԵՄ

Կերպաներու զանազանութեամբ ու ընտրութեամբ և ձեւի ու ճաշակի կատարելութեամբ այս տան գիւղ յաճախողները գոհ պիտի մնան թէ պատրաստուած հագուստներէն և թէ գիններու չափաւորութենէն:
Իւրաքանչեւի պայմաններ:
3—4

Ա. ԼԵԹՈՒԱԼ

Կ. Պոլսոյ մէջ հանրածանօթ ՊՈՍՏՈՐ Վաճառատունէն Տեարք Յովակիմեան Եղարք այս անգամ հաստատուած են ի Գահիրէ և Մուսի փողոցը՝ Լաթէսի գոհարավաճառատան զինաց բացած են վաճառատուն մը ուր կը ծախուին բրդեղէն և բամբակեղէն ձաւակ, գոլապ և զանազան տեսակ ընտիր ծալիկներ, օձիքներ, քեւնոցներ:

Ճոխ զանազանութիւն մարօքներէի, հոսեղեմներու և աղուզարդի վերաբերեալ ամեն տեսակ ապրանք: Շեֆիլի հաշակաւոր սրտատեղի գործիներ, ամեյի, մկրաս, զմեյի ևն:

ԱՊՐԱՆԱՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ և ԱՆՄՐՅԵԼԻ ԳԻՆԵՐ:
Գաւառներէն եկած յանձնարարութիւնք ճշգրիտ և փութով կը կատարուին:
14—24

ՄԻ ՄԵԱՔ ԵՐԵՔԻ ԱՌԱՆՅ ԺԱՄԱՅՈՅՅԻ

Քանի որ միմիայն 22 դուռի անհատաւոր գնող մը փութաբէն, նիւթի, կոթէն լարուղ, ընտիր ժամացոյցներ կը վաճառուին Սեյիւնեան մթերանոցի մէջ, ի հաւ խալիք փողոց (Ոսկերչաց շուկան) ձեւակերպ վէրեալէի մէջ:

Սեյիւնեան մթերանոցի մէջ կը գտնուին նաեւ ամեն ճաշակի և ամեն բաւոյր յարմար, ոսկի, արծաթ, ոսկեպատ և նիւթէ ժամացոյցք, զիջաք և գոհարեղէնք ինչպէս նաեւ պատի և քոնսոլի բազմազան բանտիւրներ:
10—12



ՃԵՐՄԱԿԵԼԷՆ ԵՒ ԱՅԼԵՆ ԼՈՒԱԼՈՒ ՇԱՄԱՐ
ԳՈՐԾԱԾԵՑԻՔ

ԼԵՍՍԻՎ ՏԻԻ ԺԵՆԻՆ

Միմիայն և ժամանակի խնայողութիւն. — Մաքրութեան կատարելագործութիւն. — Արագութիւն և դիւրութիւն. — ձեւակերպութիւն և այլոց հաւանութիւն:

ԿԱՐԵՒՈՐ. Լեւալի/sիւ ԺԵՆԻՆ 2Ի ՄԱՇԵՏՆԵՐ

Եւրոպիոյ եւ Ամերիկայի մէջ 100,000,000 ֆիւս տարեկան ապառու. — Գործածութեան կերպը խիստ դիւրին՝ իւրաքանչիւր բաժնի վրայ կը գտնուի:

Միակ ցերեկայացուցիչ յեղափոխ

Կ. Վ. ԵԿԱԻԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Գահիրէ. ՊԱԶԱՐ ՄՈՒՐՈՒՐ 24—24

Le Gérant: Dr. A. S. HAGOPIAN
Տպագրութիւն ՓԱՐՈՍ լրագրի